ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՉԱԽՈՅԱՆ ԳԱԳԻԿ ՌՈԲԵՐՏԻ

ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՄՈԴԵԼԱՎՈՐՈՒՄԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ (ՀՀ ՕՐԻՆԱԿՈՎ)

Ը.00.08 «Մաթեմատիկական տնտեսագիտություն» մասնագիտությամբ
տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2018

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Ռուբեն Ալբերտի Գևորգյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Վահրամ Վաղինակի Բաղդասարյան

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Նարինե Սինարայի Քոչինյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2018 թվականի մայիսի 25-ին, ժամը 13:30-ին, Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի տնտեսագիտության թիվ 015 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե 0009, ք. Երևան, Աբովյան 52

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2018 թվականի ապրիլի 23-ին:

015 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար
տեխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր **Ա.Հ.Առաքելյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Միգրացիան Հայաստանի Հանրապետության առջև ծառացած լրջագույն սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներից է: Պատահական չէ, որ միգրացիայի պետական արդյունավետ կարգավորման հիմնախնդրի լուծումն այսօր ՀՀ կառավարությունը ճանաչել է որպես իր գործունեության առանցքային ուղղություններից մեկը: Անկախացումից հետո Հայաստանը խորհրդային մյուս հանրապետությունների նման աչքի ընկավ արտագաղթի լայնածավալ հոսքերով: 1988-2001թթ. արտաքին միգրացիոն տեղաշարժերի արդյունքում ՀՀ-ն լքեցին և հետ չվերադարձան մոտ 1.1 մլն ՀՀ քաղաքացիներ, որը մշտական բնակչության թվի մոտ 1/3-րդից ավելին էր: 2002-2007թթ. արտաքին միգրացիոն տեղաշարժերի ծավալները կազմեցին՝ արտահոսք՝ մոտ 750 հազար մարդ, ներհոսք՝ գրեթե 600 հազար մարդ, բացասական մնացորդ՝ շուրջ 150 հազար մարդ: 2008թ. ի վեր ՀՀ սահմանահատումների տարեկան զուտ քանակը մշտապես եղել է բացասական՝ վերջին տարիներին տատանվելով 40-50 հազար միջակայքում:

Հայաստանում միգրացիոն գործընթացների հիմնական բացասական հետևանքները սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական բնույթ ունեն: Շարունակական արտագաղթը դեպի ավելի զարգացած երկրներ նվազեցնում է երկրի տնտեսական ներուժը՝ պայմանավորված որակյալ աշխատուժի, <<ուղեղների>> և կապիտալի արտահոսքով, խորացնում է աշխատաշուկայում պահանջարկի և առաջարկի անհամապատասխանությունը: Փոխվում է ժողովրդագրական իրավիճակը. դանդաղում է մշտական բնակչության թվի աճը և նվազում է առկա բնակչության թիվը: Բնակչության թվի նվազումը հատկապես դրսևորվում է երիտասարդների մասնաբաժնի կրճատմամբ, որն արագացնում է բնակչության ծերացման գործընթացը: Աշխատանքային միգրացիան բացասաբար է անդրադառնում միգրանտների ընտանիքների կայունության և սերունդների դաստիարակության վրա: Արտագաղթի բացասական հետևանքների թիրախը հատկապես թույլ զարգացած գյուղական համայնքներն են, որտեղից մարդիկ տեղաշարժվում թե՛ երկրից դուրս, թե՛ դեպի քաղաքային համայնքներ, հատկապես՝ Երևան, որն ավելի է խորացնում առկա տարածքային զարգացման անհամաչափությունները:

Հաշվի առնելով միգրացիայի դրական և բացասական հետևանքները՝ կարևոր է այնպիսի միգրացիոն քաղաքականության մշակումը և իրագործումը, որը կբխի թե՛ միգրանտների, թե՛ բնակչության մյուս զանգվածների շահերից, կօգնի առավելագույնի հասցնել միգրացիայից ստացվող օգուտները՝ միևնույն ժամանակ մինիմալացնելով վնասները: Այդպիսի քաղաքականություն մշակելու համար առաջին հերթին անհրաժեշտ է հետազոտել միգրացիայի առանձնահատկություններն ու բացահայտել դրա վրա ազդող հիմնական գործոնները:

Տվյալ աշխատանքում առաջին անգամ փորձ է կատարվելու մեկ հետազոտության շրջանակներում դիտարկել միգրացիան և վերջին ժամանակներում

մեծ հետաքրքրություն առաջացնող միջառարկայական հետազոտության առարկա սահմանադրականությունը: Սահմանադրականությունը սահմանվում է որպես կանոնների կամ նորմերի ամբողջություն, որը ստեղծում, կառուցում և սահմանում է կառավարության իշխանության ու լիազորությունների սահմանները: Բացի դրանից այդ իշխանությունը սահմանափակված է մարդու իրավունքներով և իշխանական թևերի բաժանման մեխանիզմով, և սահմանադրական հիմնարար նորմերն ու իրավունքներն իրացված են կյանքում: Հետազոտությունների համաձայն Հայաստանի Հանրապետությունը դասվում է սահմանադրականության միջին կամ միջինից ցածր մակարդակ ունեցող երկրների շարքին:

Սահմանադրականության մակարդակը կապված է հանրության գործունեության բոլոր բնագավառների հետ, և դրա դեֆիցիտը հանգեցնում է ինչպես իրավական, քաղաքական, այնպես էլ լուրջ սոցիալ-տնտեսական խնդիրների: Սահմանադրական միջավայրն էական ազդեցություն ունի շուկայական ուժերի լիարժեք և արդյունավետ գործունեության վրա, ավելին, կառավարման և այլ ինստիտուտների ոչ լիարժեք գործունեությունը հանգեցնում է շուկայական մեխանիզմի ձախողումների, որը խոչընդոտում է բարեկեցության բարձրացման նպատակի իրագործմանը: Իսկ այդ ինստիտուտների գործունեությունն առաջին հերթին պայմանավորված է սահմանադրականության մակարդակի պակասուրդով, որը հատկապես բնորոշ է տնտեսական ցածր զարգացածություն ունեցող երկրներին: Հետևաբար շատ սոցիալ-տնտեսական խնդիրների խորքային պատճառները պետք է փնտրել սահմանադրական անկատար միջավայրի դրսևորումներում, իսկ այդ խնդիրների լուծումը հնարավոր է իրականացնել սահմանադրականության մակարդակի շարունակական մշտադիտարկման և կառավարման հիման վրա: Վերջին տարիների ընթացքում սահմանադրականությունը բավականին լայն ուսումնասիրության է ենթարկվում հայ գիտական հանրույթի կողմից, և մոտակա հետազոտությունները վերաբերելու են հատկապես տարբեր սոցիալ-տնտեսական խնդիրների ուսումնասիրությանը սահմանադրականության համատեքստում:

Հետազոտության հիմնական նպատակը և խնդիրները: Ատենախոսության հիմնական նպատակը Հայաստանում միգրացիայի վրա սահմանադրականության ազդեցության մոդելների կառուցումն ու գնահատումն է: Նպատակին հասնելու համար սահմանվել են հետևյալ խնդիրները՝

- ուսումնասիրել սահմանադրական տնտեսագիտության և սահմանադրականության վերաբերյալ գրականությունը՝ հատուկ ուշադրություն դարձնելով վերջին շրջանում հայ հեղինակների կողմից սահմանադրականության մակարդակի գնահատման վերաբերյալ կատարված աշխատանքներին,
- ուսումնասիրել հայ և օտարերկրյա հեղինակների կողմից միգրացիայի որոշիչների վերլուծության տեսական և էմպիրիկ փորձը, հիմնական մոդելները և մոդելների գնահատման առավել հաճախ օգտագործվող գործիքակազմը,
- կառուցել միգրացիայի վրա սահմանադրականության ազդեցության պատճառահետևանքային կապերը,

- ուսումնասիրել անկախացումից հետո ՀՀ միգրացիոն հոսքերի դինամիկան,
- գնահատել միգրացիայի վրա սահմանադրականության ազդեցության միկրոտնտեսական մոդելը՝ հետազոտության կենտրոնում դիտարկելով այն գործոնները, որոնք արտահայտում են մարդկանց վերաբերմունքը երկրում գործող ինստիտուտների նկատմամբ,
- ուսումնասիրել համաթվերի կառուցման միջազգային փորձը և մշակել ՀՀ տարածքային զարգացման համաթիվ համայնքների մակարդակով,
- կիրառել տարածական ինտերպոլյացիայի կրիգինգ մեթոդը համայնքներում ջրի որակի գնահատման համար, որը տարածքային զարգացման համաթվի մասը կազմող էկոլոգիական բաղադրիչի տարրն է,
- քարտեզի օգնությամբ ցուցադրել ՀՀ տարածքային զարգացման անհամաչափությունները,
- գնահատել ՀՀ համայնքներից արտագաղթի որոշիչների մոդելները՝ կիրառելով տարածական լագով և տարածական սխալով ռեգրեսիոն մոդելներ,
- բացահայտել միգրացիայի և տարածքային զարգացման մակարդակի միջև կախվածությունը երկրի տարբեր հատվածներում՝ կիրառելով աշխարհագրորեն կշռված ռեգրեսիայի մեթոդը:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը սահմանադրականությունն ու միգրացիոն գործընթացներն են Հայաստանում, իսկ առարկան՝ միգրացիայի վրա սահմանադրականության ազդեցության մոդելների մշակումը և էմպիրիկ գնահատումները:

Հետազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը: Ատենախոսության տեսական հիմքը սահմանադրական տնտեսագիտության, սահմանադրականության, միգրացիայի որոշիչների տեսությունների ու մոդելների, համաթվերի կառուցման մեթոդաբանության վերաբերյալ հայ և օտարերկրյա հեղինակների, պետական ու ոչ պետական կազմակերպությունների, գիտակրթական հիմնարկությունների աշխատություններն են և ՀՀ սահմանադրական ու իրավական դաշտն է:

Որպես հետազոտության տեղեկատվական հիմք են ծառայել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության, Միավորված ազգերի կազմակերպության, Համաշխարհային բանկի, Միգրացիայի միջազգային կազմակերպության հետազոտությունները, վիճակագրական տվյալներն ու հրապարակումները, ինչպես նաև Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնի անցկացրած ներկայացուցչական հարցումները, ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից համայնքների համար 2015թ. հավաքագրված տվյալները և <<Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից 2016թ. ՀՀ մակերևութային ջրերի վերաբերյալ հրապարակված տեղեկանքի տվյալները:

Հետազոտության ընթացքում կիրառվել են մաթեմատիկական մոդելավորման, տնտեսաչափական և վիճակագրական վերլուծության մեթոդներ, մասնավորաբար՝ գործոնային վերլուծություն, լոգիթ վերլուծություն, տարածական ռեգրեսիոն մեթոդներ, տարածական ինտերպոլյացիայի կրիգինգ մեթոդ, ցուցանիշների բնականոնացման, կշռման և ագրեգացման մեթոդներ:

Ատենախոսության գիտական նորույթը: Հետազոտության հիմնական գիտական արդյունքները և նորույթը հետևյալն են՝

- Մշակվել է միգրացիայի վրա սահմանադրականության ազդեցության միկրոտնտեսական մոդելը: Միգրացիայի որոշիչների բացահայտման մոդելում ներառվել է լրացուցիչ բաղադրիչ, որը ցույց է տալիս մարդկանց վերաբերմունքը տարբեր ինստիտուտների նկատմամբ: Բացահայտվել է ինստիտուտների գործունեության նկատմամբ վստահության և միգրացիոն հակումների միջև կախվածության բնույթը, որը հաստատուն պահպանվում է վերջին տարիների ընթացքում:
- Կառուցվել և գնահատվել է ՀՀ ներքին և արտաքին միգրացիոն հոսքերի որոշիչների մակրոտնտեսական մոդելը, որը գնահատելու համար օգտագործվել են տարածական ռեգրեսիայի մեթոդներ: Բացահայտվել է, որ համայնքի զարգացածության մակարդակի և դեպի արտերկիր միգրացիայի միջև առկա է դրական կապ, իսկ դեպի Երևան միգրացիայի միջև՝ բացասական:
- Մշակվել է ՀՀ տարածքային զարգացման համաթվի կառուցման մեթոդաբանությունը, որը ՀՀ համայնքների զարգացման մակարդակն արտահայտող ամփոփ, ընդհանրական քանակական ցուցանիշ է: Ցուցանիշի կազմում ներառվել է էկոլոգիական հենասյուն, որի տարրերից մեկի՝ համայնքներում ջրի որակի գնահատման նոր մեթոդ է առաջարկվել:

Հետազոտության արդյունքների տեսական և գործնական նշանակությունը: Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ դրա արդյունքները կարող են օգտագործվել ՀՀ կառավարության, Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության, Տարածքային կառավարման և զարգացման նախարարության, Բնապահպանության նախարարության կողմից՝ տնտեսական, միգրացիոն և տարածքային զարգացման քաղաքականությունների մշակման, կատարելագործման և իրականացման ուղղությամբ: Միգրացիայի ծավալների վրա ազդող գործոնների բացահայտման ուղղությամբ կատարված ուսումնասիրությունները թույլ կտան կատարելագործել ՀՀ-ից արտագաղթի և ՀՀ-ի ներսում միգրացիոն հոսքերի կառավարման և կանխատեսման գործընթացները, իսկ ատենախոսության շրջանակներում մշակված տարածքային զարգացման համաթվի մեթոդաբանությունը հնարավորություն կընձեռի տարածքային կառավարման քաղաքականությունը զինել ևս մեկ գործիքով՝ համայնքների զարգացման մակարդակն արտահայտող քանակական ցուցանիշով:

Ատենախոսության արդյունքների փորձաքննությունը և հրապարակումները: Ատենախոսության հիմնական դրույթները քննարկվել են ԵՊՀ տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնում, ԵՊՀ Սահմանադրական տնտեսագիտության գիտավերլուծական կենտրոնի կողմից կազմակերպված սեմինարների ընթացքում, ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ, անգլ.՝ UNDP) գրասենյակի ներկայացուցիչների հետ կազմակերպված սեմինարի ընթացքում, <<Տնտեսագիտության ժամանակակից հիմնահարցեր>> ուսանողների, ասպիրանտների և երիտասարդ գիտնականների միջազգային 5-րդ գիտաժողովում (2017թ.), <<Էներգաարդյունավետության եվ էներգախնայողության հիմնախնդիրները>> թեմայով միջազգային գիտաժողովում (2017թ.), ինչպես նաև Նիդերլանդների Թագավորության Էրազմուս համալսարանի Քաղաքային զարգացման և բնակարանային ռազմավարությունների ինստիտուտում (IHS) միջբուհական համագործակցության «Կանաչ և խելացի քաղաքների կառավարում» թեմայով Էրազմուս պլուս ծրագրի շրջանակներում անցկացված սեմինարների ընթացքում (2017թ. մայիս-հուլիս):

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսության ծավալը կազմում է 175 էջ (առանց հավելվածների՝ 157 էջ):

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության **<<Ներածություն>>** բաժնում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, առաջադրվել են հետազոտության նպատակն ու խնդիրները, սահմանվել են օբյեկտը և առարկան, տրվել են աշխատանքի տեսական մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, ներկայացվել են ատենախության գիտական արդյունքներն ու նորույթը, արդյունքների տեսական ու գործնական նշանակությունը, փորձաքննությունն ու հրապարակումները, ինչպես նաև աշխատանքի կառուցվածքն ու ծավալը**:**

Ատենախոսության առաջին՝ <<**Միգրացիայի վրա սահմանադրականության ազդեցության տեսամեթոդական հիմքերը**>> գլխում ներկայացվել է սահմանադրական տնտեսագիտության և սահմանադրականության վերաբերյալ գրականությունը, մասնավորապես հայ հեղինակների կողմից սահմանադրականության մակարդակի գնահատմանն ուղղված աշխատանքները: Նաև ներկայացվել է, թե ինչ է միգրացիան, հիմնական սահմանումները, տեսակները և տեսությունները: Ի վերջո ներկայացվել է միգրացիայի վրա սահմանադրականության ազդեցության տեսական շրջանակը:

Սահմանադրական տնտեսագիտությունը տնտեսագիտության համեմատաբար երիտասարդ ենթաճյուղ է, որը փորձում է բացատրել իրավական-ինստիտուցիոնալ-սահմանադրական կանոնների հատկությունները, որոնք սահմանափակում են տնտեսական և քաղաքական սուբյեկտների որոշումները և գործողությունները[1]: Այլ կերպ ասած, այն ուսումնասիրում է սահմանափակումների, կանոնների ընտրության հիմնահարցը, այլ ոչ թե այդ կանոնների պարագայում որոշումների կայացման հիմնահարցը: Սահմանադրությունը տնտեսագիտական վերլուծության ենթարկելու համար պետք է հասկանալ, թե ինչ է սահմանադրությունը, և որոնք են սահմանադրության հիմնական նպատակները, և հետևաբար ինչ դրույթներ պետք է այն պարունակի իր նպատակներին հասնելու համար: Սահմանադրությունը սահմանում է կառավարության իշխանությունը, հիմնադրում է այն ինստիտուտները, որոնք կոչված են այդ իշխանությունը կիրարկելու համար, պարունակում է տվյալ պետության, հասարակության գաղափարախոսությունը, արժեքները և սկզբունքները, պաշտպանում է անհատների իրավունքները և ազատությունները: Իսկ այն գաղափարը, թե ինչքանով են կյանքում գործում սահմանադրության մեջ ամրագրված դրույթները, իրավական և քաղաքական գիտություններով զբաղվող գիտնականների շրջանում հայտնի է <<սահմանադրականություն>> անվանմամբ: Սահմանադրականության տարբեր սահմանումներ գոյություն ունեն: Դ. Ֆեհրենբախերը այն սահմանում է հետևյալ կերպ. <<սահմանադրականությունը գաղափարների, դիրքորոշումների և վարքագծի դրսևորումների ամբողջություն է, որն առաջ է քաշում այն սկզբունքը, որ կառավարության իշխանությունը սկիզբ է առնում և սահմանափակված է ֆունդամենտալ օրենքով (սահմանադրությամբ)>>[2]:

Սահմանադրականության մակարդակի գնահատմանն ուղղված աշխատանքները ցույց են տալիս, որ այն ինտեգրալ ցուցանիշ է, որի հիմքում տարբեր իրավական, ժողովրդավարական, քաղաքական և սոցիալ-տնտեսական ցուցիչներ են ընկած[3]:

Առաջին գլխում նաև ուսումնասիրվել են միգրացիայի վերաբերյալ հիմնական տեսությունները: Պետք է նշել, որ նախևառաջ գոյություն ունի մեծ բաց տեսական և էմպիրիկ հետազոտությունների մեջ, մյուս կողմից դեռևս չկա մեկ միասնական տեսություն այն մասին, թե ինչու են մարդիկ միգրացիայի դիմում: Ինչպես Օ. Բոդվարսսոնն ու Հ. Վան դեն Բերգն են նշում, միգրացիայի տեսաբանների համար ամենամեծ մարտահրավերը մեկ միասնական համաձայնեցված տեսության մշակումն է, որը կներառի միգրացիայի համար կարևոր բոլոր գործոններն ու ցույց կտա այդ

---

[1] Van den Hauwe L., 2005. Constitutional Economics II, The Elgar Companion to Law and Economics, pp. 223–224.

[2] Don E. Fehrenbacher, 1989. Constitutions and Constitutionalism in the Slaveholding South (University of Georgia Press, 1989), p. 1.

[3] Տե՛ս Harutyunyan G., Mavcic, A., 1999. The Constitutional Review and Its Development in The Modern World (A Comparative Constitutional Analaysis), Yerevan – Ljubljana, ինչպես նաև Հարությունյան Գ., Սարգսյան Հ., Գևորգյան Ռ., 2017: Սահմանադրականություն. ախտորոշման և կառավարման խնդիրներ: Զանգակ, Երևան:

գործոնների միջև փոխազդեցությունն այնպես, որ հնարավոր կլինի այդ ամենն էմպիրիկ ստուգման ենթարկել[4]:

Միգրացիան բացատրող գրականության մեջ գերիշխող դեր ունի նեոդասական տեսությունը: Տեսության հիմնական ենթադրությունն այն է, որ մարդիկ ռացիոնալ անհատներ են և ցանկացած որոշում կայացնելիս նախ գնահատում են հնարավոր տարբեր իրավիճակներում սպասվող սեփական տնտեսական օգուտները և վնասները և որոշում են կայացնում այն իրավիճակի օգտին, որի դեպքում սպասվող տնտեսական զուտ օգուտներն առավելագույնն են: Տեսության քննադատությունները հիմնականում ծավալվում են այն գաղափարի շուրջ, որ միգրացիայի որոշման վրա դրամական գործոններից զատ ազդեցություն ունեն նաև այլ գործոններ[5]:

Միգրացիայի նոր տնտեսագիտական տեսությունը միգրանտին դիտարկում է որպես տնային տնտեսության անդամ, հետևաբար նրա որոշման վրա ազդում են նաև ընտանիքի այլ անդամների նախասիրությունները:

Համաշխարհային համակարգերի տեսությունը միգրացիան դիտարկում է գլոբալ տեսանկյունից՝ այն համարելով գլոբալիզացիայի բնական հետևանք:

Երկակի աշխատաշուկաների տեսության համաձայն միջազգային միգրացիան պայմանավորված է զարգացած տնտեսությամբ երկրներում ձգող գործոններով, որտեղ ցածր որակավորմամբ աշխատողների մշտական պահանջարկ կա, հետևաբար այդ երկրները հատուկ միգրացիոն քաղաքականություն են վարում զարգացող երկրներից միգրանտներ ներգրավելու նպատակով:

Միգրանտների ցանցերի և միգրացիայի ինստիտուցիոնալ տեսությունները փորձում են բացատրել ոչ թե միգրացիայի առաջացումը, այլ դրա շարունակական բնույթը: Համաձայն այս տեսությունների՝ միջազգային միգրանտների երկարատև և լայնածավալ հոսքի արդյունքում կարող են առաջանալ միգրանտների ցանցեր՝ ուղարկող և ընդունող երկրներում միգրանտների միջև միջանձնային կապերի ձևավորման և պահպանման տեսքով:

Առաջին գլխում նաև ներկայացվում է սահմանադրականության և միգրացիայի միջև առկա պատճառահետանքային կապը: Այսպես, սահմանադրության դրույթների խախտումը հանգեցնում է սահմանադրականության մակարդակի պակասուրդի: Սահմանադրական անկատար միջավայրը (սահմանադրականության պակասուրդը) հանգեցնում է սոցիալ-տնտեսական լուրջ հիմնախնդիրների, որոնց լուծումը հնարավոր է իրականացնել սահմանադրականության մակարդակի մշտադիտարկման և կառավարման միջոցով: Սահմանադրության դրույթների իրացման ձախողումները կարող են ուղղակի կամ միջնորդավորված ազդեցություն ունենալ միգրացիայի

---

[4] Bodvarsson Ö. B., Van den Berg H., 2013. The Economics of Immigration: Theory and Policy. Springer-Verlag New York, p. 27.

[5] Piché V., 2013. Contemporary Migration Theories as Reflected in their Founding Texts. *Population* (INED). Vol. 68, No. 1, pp. 141-164.

որոշիչների վրա՝ այդպիսով պատճառ դառնալով մարդկանց տեղաշարժի երկրից դուրս:

Օրինակով կարելի է ցույց տալ, թե ինչպես է վերոնշյալ սխեման գործում: ՀՀ սահմանադրության 7-րդ հոդվածում ասվում է. <<Հայաստանի Հանրապետությունում Ազգային ժողովի և համայնքների ավագանիների ընտրությունները, ինչպես նաև հանրաքվեներն անցկացվում են ընդհանուր, հավասար, ազատ և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ>>: Եթե տվյալ դրույթի պահանջները խախտվում են, օրինակ՝ ընտրություններն անցկացվում են ընտրակեղծիքներով, խաթարվում է գաղտնիության պահանջը, ապա մարդու մոտ երկիրը լքելու և այնպիսի երկրում բնակություն հաստատելու ցանկություն է առաջանում, որտեղ ստեղծված են այնպիսի պայմաններ, որ նրա՝ ընտրություններին մասնակից լինելու միջոցով կառավարմանը մասնակցելու իրավունքը չի ոտնահարվում: Միևնույն դրույթի իրացման պակասուրդը կարող է նաև անուղղակի, միջնորդավորված ազդեցություն ունենալ մարդկանց՝ միգրացիայի դիմելու ցանկության վրա: Եթե ընտրություններն անցկացվում են կեղծիքներով, ապա ժողովրդավարության մակարդակը երկրում ցածր է, հետևաբար մեծ ռիսկ կա, որ իշխանությունը հայտնվում է այնպիսի մարդկանց ձեռքերում, ովքեր կարող են իշխանությունն օգտագործել՝ սեփական շահը հետապնդելով և հանրային շահն անտեսելով, որի հետևանքները տարբեր կարող են լինել՝ հանգեցնելով տնտեսական անարդյունավետության, սոցիալական խնդիրների և այլն: Սա էլ իր հերթին կարող է պատճառ դառնալ գործազրկության բարձրացման, աշխատավարձերի ցածր մակարդակի և այլն, որն էլ ի վերջո կարող է բերել միգրացիայի աճի: Նույն տրամաբանությամբ կարելի է նաև սահմանադրության մյուս դրույթների համար կառուցել պատճառահետևանքային կապեր՝ ըստ միգրացիայի վրա ազդեցության մեխանիզմների:

Երկրորդ՝ <<**Միգրացիայի վրա սահմանադրականության ազդեցության տնտեսագիտամաթեմատիկական մոդելները>>** գլխում ուսումնասիրվել են միգրացիայի մոդելավորման միջազգային փորձը, մասնավորապես միգրացիայի որոշիչների բացահայտման տեսական մոդելները, այդ մոդելների գնահատման ժամանակ կիրառվող տվյալների տեսակները և վիճակագրական ու էկոնոմետրիկ գործիքակազմը: Ուսումնասիրվել են նաև միգրացիայի որոշիչների բացահայտմանն ուղղված հայ ու օտարերկրյա հեղինակների հիմնական էմպիրիկ աշխատանքները:

Տվյալ հետազոտության և միգրացիայի վերաբերյալ գրականության միջև զուգահեռներ անցկացնելիս ակնհայտ է դառնում, որ միգրացիայի և սահմանադրականության միջև կապն առաջին հերթին առնչվում է միգրացիայի վերաբերյալ հետևյալ հարցի ուսումնասիրությանը՝ <<ինչու՞ են մարդիկ միգրացիայի դիմում>>, կամ այլ կերպ ասած՝ <<որո՞նք են միգրացիայի որոշիչները>>: Հիմք ընդունելով միգրացիայի որոշիչների հետազոտության վերաբերյալ հարուստ տեսական և էմպիրիկ գրականությունը՝ միգրացիայի վրա սահմանադրականության ազդեցության տնտեսագիտամաթեմատիկական մոդելները նույնպես մշակվել, զարգացվել և

փորձառական ստուգման են ենթարկվել միգրացիայի հետազոտության՝ միջազգային գիտական հանրույթի կողմից ընդունված մոդելների և մեթոդների հիման վրա:

Միգրացիայի որոշիչների վերաբերյալ հետազոտությունները կարելի է բաժանել երկու խմբի՝ պայմանավորված օգտագործված տվյալների և մոդելների բնույթով: Միկրո հետազոտությունների հիմքում ներկայացուցչական հարցումների միջոցով հավաքագրված տվյալներն են, իսկ հիմնական մոդելը՝ մարդկային կապիտալի մոդելն է: Մակրո մակարդակով հետազոտությունների հիմքում ագրեգացված տվյալներն են, իսկ մոդելներում միգրացիան դիտարկվում է որպես աշխատանքի և այլ շուկաներում հավասարակշռող գործոն: Ատենախոսությունում վերլուծվել են երկու տեսակ տվյալների կիրառությունը՝ ցույց տալով յուրաքանչյուրի ուժեղ և թույլ կողմերը: Մասնավորապես, հատուկ ուշադրություն է դարձվել միկրո տվյալների կիրառության ժամանակ առաջացող երկու խնդիրներին՝ ընտրանքի ճիշտ ընտրությանը և ընտրանքում փոփոխականների միջև բազմակոլինեարության առկայությանը: Ներկայացվել է վերոնշյալ խնդիրներից երկրորդի հաղթահարման առավել ընդունված եղանակներից մեկը՝ գործոնային վերլուծությունը:

Միգրացիայի տնտեսագիտամաթեմատիկական մոդելները դասակարգվում են տարբեր խմբերի՝ միկրո և մակրո, դինամիկ և ստոխաստիկ, ստատիկ և դինամիկ մոդելներ և այլն, իսկ հեղինակների կողմից առավել հաճախ օգտագործվող մոդելները տարածական փոխազդեցությունների մոդելներն են՝ գրավիտացիոն և ձևափոխված գրավիտացիոն մոդելները: Մոդելները վիճակագրական և էկոնոմետրիկ վերլուծության ենթարկելիս ամենից տարածված մեթոդները և գործիքները սովորական փոքրագույն քառակուսիների, առավելագույն ճշմարտանմանության, վեկտորական ավտոռեգրեսիայի և լոգիսթիկ ռեգրեսիայի մեթոդներն են:

Գլխի հաջորդ մասում իրականացվել է միգրացիայի որոշիչների բացահայտման վերաբերյալ միջազգային էմպիրիկ գրականության ուսումնասիրություն: Միգրացիայի որոշիչները դասակարգվել են հինգ խմբի մեջ՝ ժողովրդագրական, աշխարհագրական, տնտեսական, քաղաքական և սոցիալական, պատմական ու մշակութային, այնուհետև մի քանի տասնյակ հետազոտությունների ուսումնասիրության արդյունքում բացահայտվել են, թե վերոնշյալ խմբերում ընդգրկված գործոնների՝ միգրացիայի վրա ազդեցության կանխավարկածը մերժվում է, թե ոչ: Հատուկ ուշադրություն է դարձվել այն աշխատանքների վրա, որոնցում հիմնական փոփոխականներից զատ դիտարկվել են նաև երկրի կամ տարածաշրջանի ինստիտուտների գործունեության արդյունավետության վերաբերյալ փոփոխականներ: Գրականության ուսումնասիրության հիմնական արդյունքները հետևյալն են՝

- կան հետազոտություններ, որտեղ ավանդական փոփոխականները՝ տնտեսական և ժողովրդագրական գործոնները (տարբեր շրջանների միջև եկամուտների անհավասարություն, գործազրկության մակարդակ, սպասումներ և այլն) կարևոր դեր չունեն միգրացիան բացատրելու հարցում, սակայն մոդելների մեծ մասում այդ ազդեցությունը վիճակագրորեն նշանակալի է,

- գրավիտացիոն մոդելների հիմնական փոփոխականները՝ բնակչության քանակը ու ընդունող և ուղարկող շրջանների միջև հեռավորությունն ավելի մեծ հաջողությամբ բացատրում են փոքր տարածություններ ընդգրկող միգրացիան՝ ներքին միգրացիան. վերջին տասնամյակների ընթացքում տրանսպորտային և հաղորդակցության ծառայությունների զարգացումն էականորեն նվազեցրել է միգրացիայի հետ կապված ծախսերը,
- երկրների միջև առկա պատմական, լեզվային կամ ինստիտուցիոնալ նմանությունները նշանակալի դեր ունեն մարդկանց կողմից միգրացիայի ուղղությունն ընտրելու հարցում,
- երկրների ընդհանուր և ուրիշ երկրների հետ փոխադարձ միգրացիոն քաղաքականությունները նույնպես ազդում են միգրացիոն հոսքերի վրա,
- ի վերջո, երկրում ինստիտուցիոնալ զարգացման մակարդակը կարող է լուրջ գործոն հանդիսանալ միգրացիայի վերաբերյալ որոշում կայացնելու հարցում, ընդ որում՝ նույնիսկ միևնույն երկրի տարբեր շրջաններում ինստիտուցիոնալ զարգացվածության աստիճանը կարող է հանգեցնել շրջանների միջև միգրացիոն տեղաշարժերի:

Անկախացումից հետո Հայաստանում միգրացիոն գործընթացներին բնորոշ է արտագաղթի շարունակական բնույթը: Համաձայն ՀՀ միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի՝ 1988-2001թ. արտաքին միգրացիոն տեղաշարժերի արդյունքում ՀՀ-ն լքել և հետ չեն վերադարձել մոտ 1.1 մլն ՀՀ քաղաքացիներ, որը մշտական բնակչության թվի մոտ 1/3-րդից ավելին է[6]: 2002-2007 թվականներին, որը հետազոտողները պայմանականորեն անվանում են <<շարունակական ժամանակավոր միգրացիայի փուլ>>, արտաքին միգրացիոն տեղաշարժերի ծավալները կազմել են՝ արտահոսք՝ մոտ 750 հազար մարդ, ներհոսք՝ գրեթե 600 հազար մարդ, բացասական մնացորդ՝ շուրջ 150 հազար մարդ[7]: 2008թ. ի վեր սահմանահատումների զուտ քանակը եղել է բացասական. 2008 թվականին կազմելով -23100, 2009 թվականին՝ -25000, 2010 թվականին՝ -46684, 2011 թվականին՝ -43820, 2012 թվականին՝ - 42811, 2013 թվականին՝ -31188, 2014 թվականին՝ -41672, 2015՝ -43438, իսկ 2016թ.՝ -48200[8]:

Հայաստանում միգրացիայի միտումները և պատճառները նույնպես հայտնվել են հայ և արտասահմանյան հեղինակների ուշադրության կենտրոնում: Ինչպես և միջազգային գրականության դեպքում է, այստեղ էլ էմպիրիկ վերլուծությունները կատարվել են երկու հիմնական ուղղությամբ՝ միգրացիայի վրա ազդող գործոնների հետազոտություն և միգրացիայի հետևանքների հետազոտություն: Սակայն միգրացիայի գրականության մեջ դեռևս առկա են հարցեր և խնդիրներ, որոնք

---

[6] ՀՀ միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգ, Երևան, 2010թ.:

[7] Միգրացիա և հմտություններ. Հայաստանի ազգային զեկույց: Եվրոպական կրթական հիմնադրամ և Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն, 2012, Հայաստան:

[8] Տվյալները հասանելի են հետևյալ հղումով՝ http://www.smsmta.am/?menu_id=18:

ուսումնասիրման և լուծման կարիք ունեն: Մասնավորապես, դեռևս չկան հետազոտություններ, որոնք ուսումնասիրում են սահմանադրականության և միգրացիայի միջև կապը: Գրականության բացերից է նաև այն, որ բոլոր հետազոտությունները կատարվում են միկրո մակարդակով հարցումների արդյունքում ստացված տվյալների հիմա վրա կամ ամբողջ երկրի ու հազվադեպ դեպքերում մարզերի մակարդակով ագրեգացված տվյալների հիման վրա: Դեռևս չկան հետազոտություններ, որոնք կհետազոտեն միգրացիայի որոշիչները համայնքերի մակարդակով: ՀՀ-ում միգրացիոն հոսքերի մոդելավորման նպատակով դեռևս չեն կիրառվել տարածական ռեգրեսիոն մոդելներ:

Ատենախոսության երրորդ՝ <<**ՀՀ միգրացիայի վրա սահմանադրականության ազդեցության գնահատումը**>> գլխում ներկայացվել են միգրացիայի վրա սահմանադրականության ազդեցության միկրոտնտեսական և մակրոտնտեսական մոդելները և դրանց գնահատումը:

Միգրացիայի վրա սահմանադրականության ազդեցության միկրոտնտեսական մոդելը կառուցվում է Շասթադի առաջարկած մարդկային կապիտալի մոդելի հիման վրա, իսկ հիմնական ենթադրությունն այն է, որ երկրում սահմանադրականության մակարդակը միգրացիայի հրահրող կամ պահող գործոն կարող է լինել, ընդ որում՝ սահմանադրականության ազդեցությունը մարդկանց միգրացիոն հակումների վրա ուղղակի և անուղղակի բնույթ կարող է ունենալ:

Դիտարկենք միջազգային միգրացիայի դեպքը: Դիցուք՝ ունենք n քանակությամբ երկրներ: Համաձայն Պատահական օգտակարության մաքսիմալացման մոդելի (անգլ.՝ Random Utility Maximization (RUM) model)[9] j երկրում բնակվող i անհատը t ժամանակահատվածի ընթացքում k երկիր տեղափոխվելիս ստանում է որոշակի օգտակարություն, որը կազմված է երեք կարևոր բաղադրիչներից՝

$$U_{ijkt} = w_{jkt} - c_{jkt} + s_{ijkt}, \qquad (1)$$

որտեղ U_{ijkt}-ն տեղափոխվելիս ստացվող օգտակարությունն է, w_{jkt}-ն օգտակարության այն բաղադրիչն է, որը ֆունկցիա է j և k երկրների տարբեր բնութագրերից, c_{jkt}-ն տեղաշարժման ծախսերն են, իսկ s_{ijkt}-ն օգտակարության անհատական-յուրահատուկ ստոխաստիկ բաղադրիչն է:

Անհատը ժամանակի t պահին <<հաշվարկում>> է բոլոր $n-1$ ուղղություններով տեղաշարժվելու դեպքում իր օգտակարության փոփոխությունները և ընտրում է այն ուղղությունը, որի համար U_{ijkt} $(k = 1, \dots, n-1)$ մեծությունն առավելագույնն է ստացվում: Եթե բոլոր k-երի համար $U_{ijkt} < 0$, ապա նա մնում է իր երկրում:

Եթե արտերկրի բոլոր երկրները համարենք մեկ k երկիր, ապա (1) հավասարմանը համարժեք կլինի հետևյալ հավասարումը՝

[9] Beine M., Bertoli S., Moraga J., 2016. A Practitioners' Guide to Gravity Models of International Migration. *The World Economy*, Vol. 39, No. 4, pp. 496-512.

$$\Pr(Y_i = 1|X_j, X_k, s_i) = \beta_0 + \beta_1 X_j + \beta_2 X_k + \beta_3 c_{jk} + \beta_4 s_i + \varepsilon_i, \quad (2)$$

որտեղ Y_i-ն միգրացիայի դիմելու որոշումն է (երկու հնարավոր ելքերով՝ մեկնել կամ մնալ), որի հավանականությունը կախված է մարդու բնակության երկրի՝ տվյալ դեպքում Հայաստանի, և k արտերկրի բնութագրիչ առանձնահատկություններից՝ X_j և X_k, միգրացիայի ծախսերից՝ c_{jk}, և մարդու անհատական-յուրահատուկ բնութագրերից՝ s_i, իսկ ε_i-ն այն գործոններն են, որոնք չեն ներառվել մոդելում:

Մեր մոդելում դիտարկվում է միակողմանի միգրացիան, այսինքն՝ միայն j երկրից արտերկիր մեկնելու դեպքը՝ անկախ մեկնելու ուղղությունից, հետևաբար (2) հավասարումը կլինի՝

$$\Pr(Y_i = 1|X, s_i) = \beta_0 + \beta_1 X + \beta_2 s_i + \varepsilon_i, \quad (3)$$

որտեղ $X = X_j$, իսկ մոդելից X_k և c_{jk} փոփոխականները դուրս թողնելու արդյունքում կորուսյալ տեղեկության մի մասը փոխհատուցվում է s_i-ի հաշվին (օրինակ՝ արտերկրում մոտ բարեկամ կամ ընկեր ունենալու հանգամանքը կարող է փոխարինել միգրացիայի հետ կապված ծախսերի վերաբերյալ փոփոխականին և այլն), մյուս մասն ավելանում է ε_i-ին:

(3) հավասարման տեսքի մոդելներում պետք է մեծ զգուշավորություն ցուցաբերել մեկ հանգամանքի նկատմամբ: Այդ տեսքի միկրոտնտեսական մոդելները գնահատվում են միկրո տվյալների, այսինքն՝ ներկայացուցչական հարցումների օգտագործմամբ, հետևաբար մոդելի X բաղադրիչը, որն ուղարկող երկրի օբյեկտիվորեն չափելի բնութագրիչ առանձնահատկություններն է, իրականում արտահայտվում է երկու գործոնների համատեղման միջոցով: Օրինակ՝ եթե խոսում ենք երկրում որևէ ինստիտուտի գործունեության արդյունավետության մասին, ապա առաջին գործոնն այդ ինստիտուտի գործունեության արդյունավետության օբյեկտիվ մակարդակն է երկրում, իսկ երկրորդ գործոնը՝ մարդկանց ունեցած կարծիքն առաջին գործոնի վերաբերյալ: Եթե առաջինն անկախ է մարդկանց կամքից և հաստատուն է բոլորի համար, ապա երկրորդը փոփոխվում է մի մարդուց մյուսին անցնելիս: Նշվածը մոդելում արտահայտվում է X-ի տարրալուծմամբ երկու մասի, որոնցից առաջինը բաշխվում է β_0 ազատ անդամի վրա (β_0'), քանի որ նույնն է բոլորի համար, իսկ երկրորդն ավելանում է s_i անհատական-յուրահատուկ որոշիչների շարքին (s_i^a): Արդյունքում վերջնական հավասարումը կլինի՝

$$\Pr(Y_i = 1|s_i, s_i^a) = \beta_0 + \beta_0' + \beta_2 s_i + \beta_3 s_i^a + \varepsilon_i, \quad (4)$$

կամ որ նույնն է՝

$$\Pr(Y_i = 1|s_i, s_i^a) = \beta_0 + \beta_1 s_i + \beta_2 s_i^a + \varepsilon_i: \quad (5)$$

Մոդելը գնահատելու համար օգտագործվել են Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնի (ՀՌԿԿ, անգլ.՝ Caucasus Research Resource Center, CRRC) կողմից 2004 թվականից ի վեր հարավկովկասյան երեք պետություններում՝

Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում, ամեն տարի անցկացվող ներկայացուցչական հարցումների տվյալները: Հարցերը վերաբերում են մարդկանց կյանքի տարբեր ոլորտներին, այդ թվում կան հարցեր, որոնք առնչություն ունեն միգրացիայի հետ: Այդ հարցերից առավել կարևորները չորսն են՝ <<ունե՞ք արդյոք արտերկում ապրող մոտ բարեկամ>>, <<ունե՞ք արդյոք արտերկրում ապրող մոտ ընկեր>>, <<հետաքրքրվա՞ծ եք արդյոք մշտական միգրացիայի դիմելով>>, <<հետաքրքրվա՞ծ եք արդյոք ժամանակավոր միգրացիայի դիմելով>>: Տվյալների բազայում առկա են նաև այնպիսի հարցեր, որոնք փորձում են բացահայտել մարդկանց ունեցած վերաբերմունքը երկրում ընթացող քաղաքական գործընթացներին և մարդու իրավունքների պաշտպանվածությանը, օրինակ՝ արդյոք երկրում ընտրություններն արդար են, ինչքանով է մարդը վստահում տարբեր ինստիտուտներին, ինչքանով է պաշտպանված ազատ խոսելու իրավունքը և այլն: Ակնհայտ է, որ այդ փոփոխականներն օբյեկտիվ լինել չեն կարող. նրանք ընդամենը ցույց են տալիս մարդկանց սուբյեկտիվ կարծիքը: Իհարկե, այդ հարցերի մեջ ոչ մի ակնարկ չկա երկրում սահմանադրականության մակարդակին, սակայն մեր կարծիքով այնպիսի հարցերը, ինչպիսիք են <<ինչքանո՞վ եք վստահում երկրի նախագահին, կառավարությանը, ազգային ժողովին, դատական համակարգին>>, <<ինչքանո՞վ են պաշտպանված մարդու իրավունքները>> և նման մյուս հարցերը կարող են բավականին լավ մոտարկում հանդիսանալ <<սահմանադրականության մակարդակ>> փոփոխականի համար: Մյուս կողմից արդեն ցույց էինք տվել, որ սահմանադրականության մակարդակն ինտեգրալ ցուցանիշ է, որը կառուցվում է ժողովրդավարական, քաղաքական, իրավական և սոցիալ-տնտեսական ցուցանիշների հիման վրա: Հետևաբար մեր մոդելում s_i^a-ը կարող ենք ընդունել որպես վեկտոր, որի տարրերը կազմված են սահմանադրականության մակարդակի հիմքը հանդիսացող փոփոխականներից:

(5) հավասարման գնահատումը իրականացվել է նախ 2015թ. տվյալների համար, ապա նաև նախորդ տարիների՝ 2008, 2009, 2010, 2011, 2012, 2013 թվականների համար:

Բազմակոլինեարության խնդիրը հաղթահարելու նպատակով իրականացվել է գործոնային վերլուծություն, որի արդյունքում 2015թ. գնահատված մոդելում քսաներկու փոփոխականներից ստացվել է 6 գործոն, որոնք պայմանականորեն անվանվել են՝ երկրի իշխանության նկատմամբ վստահության աստիճան, անհատի տնտեսական վիճակ, բանկային համակարգի նկատմամբ վստահության աստիճան, կյանքից բավարարվածության աստիճան, կրթական և առողջապահական համակարգերի նկատմամբ վստահության աստիճան, կրոնական կազմակերպության նկատմամբ վստահության աստիճան: Լոգիթ վերլուծության արդյունքները հետևյալն են. մշտական միգրացիայի դեպքում նախորդ տարիների համար կատարված վերլուծությունների արդյունքում երկու գործոն՝ <<երկրի իշխանությունների նկատմամբ վստահության աստիճան>> և <<անհատի տնտեսական վիճակ>>, վիճակագրորեն նշանակալի են ստացվել բոլոր տարիների համար, ընդ որում՝ գործակիցները բոլոր տարիների համար

բացասական են: Գործոնների միջև համեմատական վերլուծության ընթացքում բացահայտվում է, որ ըստ միգրացիայի որոշման վրա ազդեցության չափի ամենից կարևոր գործոնն է կրթական և առողջապահական համակարգերի նկատմամբ վստահությունը, ապա անհատի տնտեսական, ֆինանսական վիճակը, և ի վերջո երկրի իշխանությունների նկատմամբ վստահության չափը:

Ինչ վերաբերում է այն փոփոխականներին, որոնք գործոնային վերլուծության մեջ չեն ներառվել, ապա դրանցից որոշները նույնպես վիճակագրորեն նշանակալի են եղել մի քանի տարիների համար: Դրանցից են մարդկանց տարիքը, արտերկրում ընկեր կամ բարեկամ ունենալու, վերջին մեկ տարվա ընթացքում կաշառք տված լինելու հանգամանքը, ռուսերեն լեզվի իմացությունը և ազգային բանակի նկատմամբ վստահությունը:

Ներկայացնենք միգրացիայի վրա սահմանադրականության ազդեցության մակրոտնտեսական մոդելը: Մոդելում դիտարկվել են ՀՀ համայնքներից ներքին՝ դեպի այլ համայնքներ և Երևան, և արտաքին՝ դեպի արտերկիր, միգրացիոն հոսքերը: Հիմնական հավասարումը հետևյալն է՝

$$M_{jt} = \beta_0 + \beta_1 x_{jt} + \varepsilon_{jt}; \qquad (6)$$

որտեղ M_{jkt}-ն t ժամանակահատվածում j համայնքից արտագաղթածների մասնաբաժինն է j համայնքի բնակչության մեջ, x_{jt}-ն տվյալ համայնքի բնութագրիչ առանձնահատկություններն են, իսկ ε_{jt}-ն պատահական սխալն է, որը պայմանավորված է մոդելում չներառված գործոններով:

Քանի որ համայնքները տարածքով և բնակչության թվաքանակով շատ փոքր են, հետևաբար տարածական ավտոկոռելյացիայի դրսևորման մեծ ռիսկ կա, որը կարող է հանգեցնել շեղված գնահատականների ստացման: Հետևաբար կիրառվել են տարածական ռեգրեսիոն մոդելներ, մասնավորապես, տարածական ավտոռեգրեսիվ մոդել (SAR) և տարածական սխալով մոդել (SEM)[10]:

Առաջինի դեպքում ենթադրվում է, որ j համայնքից մարդկանց արտահոսքի վրա (6) մոդելում ընդգրկված գործոններից զատ նաև ազդեցություն ունի հարևան համայնքներից արտագաղթի մեծությունը: Միգրացիայի համար SAR մոդելն ունի հետևյալ տեսքը՝

$$M_{jt} = \lambda W M_{zt} + \beta_0 + \beta_1 x_{jt} + \varepsilon_{jt}, \qquad (7)$$

որտեղ M_{zt}-ն միգրացիայի գործակիցն է j համայնքին հարևան z համայնքներում, W-ն տարածական կշիռների մատրիցն է, իսկ λ-ն գործակից է:

SEM մոդելի դեպքում իրար հարևան համայնքներում միգրացիայի գործակիցը կարող է փոփոխվել որևէ գործոնի հաշվին, որը յուրահատուկ է տվյալ տարածաշրջանի

[10] Saldaña-Zorrilla S., Sandberg K., 2009. Impact of climate-related disasters on human migration in Mexico: a spatial model. *Climatic Change,* Vol. 96, No. 1, pp.97-118.

համար, սակայն չի ներառվում (6) հավասարման աջ մասի գործոնների շարքում: SEM մոդելը ներկայացվում է (8), (9) հավասարումներով՝

$$M_{jt} = \beta_0 + \beta_1 x_{jt} + \varepsilon_{jt}, \quad (8)$$

$$\varepsilon_{jt} = \rho W \epsilon_{jt} + v_{jt}, \quad (9)$$

որտեղ v_{jt} պատահական սխալները նորմալ են բաշխված, և $E(v_{jt}) = 0, E(v_{jt}v'_{jt}) = \sigma^2 I$:

Էկոնոմետրիկ գնահատման են ենթարկվել (6) մոդելը, ինչպես նաև տարածական լագով և տարածական սխալով մոդելները: Մոդելների գնահատման համար օգտագործվել են ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարության (ՏԿԶՆ) կողմից համայնքների համար 2015թ. հավաքագրված տվյալները: Առկա է վիճակագրություն ամեն համայնքից դեպի արտերկիր, Երևան, ՀՀ այլ բնակավայր և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն մշտական բնակության նպատակով հեռացած մարդկանց քանակի վերաբերյալ, ինչպես նաև այն մասին, թե ինչքան մարդ է եկել տվյալ համայնք վերոնշյալ չորս ուղղություններից:

Ինչ վերաբերում է x_{jt} բաղադրիչներին, ապա դրանք տվյալների բազայի հիման վրա հաշվարկված բազմաթիվ ցուցանիշներ են, որոնք ցույց են տալիս յուրաքանչյուր համայնքի բնութագրիչ առանձնահատկությունները: Համաձայն ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի՝ պետության քաղաքականության հիմնական նպատակներից մեկը տարածքային համաչափ զարգացումն է, իսկ 87-րդ կետի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց իրավասությունների և հնարավորությունների շրջանակում պարտավոր են իրագործել Սահմանադրության 86-րդ կետում նշված նպատակները: Մեկ այլ փաստաթղթում՝ ՀՀ տարածքային զարգացման հայեցակարգում, նշվում է, որ տարածաշրջանների միջև զարգացման անհամաչափությունները սկսել են խորանալ հատկապես 2000-ական թվականներից՝ տնտեսական աճին զուգընթաց, որն արտահայտվել է հիմնականում մայրաքաղաք Երևանի տնտեսական դերի և նշանակության աճով և մայրաքաղաքի ու մյուս մարզերի միջև կենսամակարդակի տարբերությունների խորացմամբ: Այդ տարբերությունների բացասական հետևանքներից է եղել և մնում թույլ զարգացած համայնքներից բնակչության արտահոսքը դեպի ավելի զարգացած համայնքներ, հատկապես՝ Երևան, և դեպի արտերկիր: Քանի դեռ Սահմանադրության մեջ ներառված այդ դրույթը կյանքում չի իրագործվում, տարածքային անհամաչափ զարգացումը կանխարգելելու և այդ անհամաչափությունները մեղմելու համար պատասխանատու կառավարությունը և տեղական ինքնակառավարման մարմինները ձախողվում են իրենց գործառույթներում, այլ կերպ ասած՝ Սահմանադրության այդ դրույթի մասով առկա է սահմանադրականության պակասուրդ, ակնկալվում է, որ բնակչության արտահոսքը շարունակելու է պահպանել իր տեմպը՝ հանգեցնելով համայնքներում բնակեցվածության նոսրացման և բնակչության կենտրոնացման քաղաքային բնակավայրերում:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ մոդելները գնահատելիս x_{jt} ցուցանիշների թվում նաև ներառվել է համայնքների զարգացածության մակարդակի վերաբերյալ մեր կողմից հաշվարկված համաթիվը՝ Տարածքային զարգացման համաթիվը (ՏԶՀ): Այն համայնքի զարգացման մակարդակն արտացոլող քանակական ցուցանիշ է, որը թույլ է տալիս իրականացնել համեմատություններ տարբեր համայնքների միջև՝ բացահայտելով վերջիններիս նմանությունները և տարբերությունները, ուժեղ և թույլ կողմերը, և անընդհատ մշտադիտարկման ենթարկել իրականացվող քաղաքականությունների արդյունքները: Մոտ 900 փոփոխականների հիման վրա հաշվարկվել են քառասունյոթ ցուցիչներ՝ հիմք ընդունելով ՏԿԶՆ-ի իրականացրած վերլուծությունները համայնքների ուժեղ և թույլ կողմերի վերաբերյալ: Ցուցիչները բաժանվել են ութ հենասյուների, որոնք խմբավորվել են երկու խմբում՝ սոցիալական և ֆիզիկական: Այդ հենասյուներն են՝ ժողովրդագրություն, կենսապայմաններ, զբաղվածություն, կրթություն, տնտեսական վիճակ, տրանսպորտային ենթակառուցվածքի կարգավիճակ, հանրային բարիքների հասանելիություն և բնակելի կառույցների կարգավիճակ: Առաջին քայլում, օգտագործելով տոկոսային դիրքի մեթոդը, ցուցիչները բնականոնացման են ենթարկվել, որոնց միջին թվաբանականը հաշվարկելով՝ ստացվել են հենասյուների արժեքները: Ապա հենասյուների արժեքներն ագրեգացվել են՝ օգտագործելով մի դեպքում երկքայլ քլաստերացման արդյունքում ստացված կշիռները, մյուս դեպքում բոլոր հենասյուները ստացել են հավասար կշիռներ: Համաթվի կազմում նաև ներառվել է էկոլոգիական բաղադրիչ, որի կազմում մտնող ցուցանիշի՝ համայնքներում մակերևութային ջրերի որակի գնահատման համար օգտագործվել է կրիգինգ մեթոդը:

Միգրացիայի վրա սահմանադրականության գնահատման մոդելի հիմնական արդյունքներն են՝

- ՏԶՀ-ի ազդեցությունն արտերկիր մեկնողների գործակցի վրա եղել է դրական: Եթե ՏԶՀ-ի արժեքը մեծանա 1-ով (10 բալային սանդղակում), արտերկիր մեկնողների մասնաբաժինը կմեծանա 0,5 տոկոսային կետով: ՏԶՀ-ի ազդեցությունը Երևան մեկնողների գործակցի վրա եղել է բացասական: Եթե ՏԶՀ-ի արժեքը մեծանա 1-ով (10 բալային սանդղակում), Երևան մեկնողների մասնաբաժինը կփոքրանա 0,096 տոկոսային կետով: Սա կարող է բացատրվել մի քանի հանգամանքով: Առաջին հերթին ենթադրվում է, որ համայնքի զարգացածության մակարդակի և մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների՝ մասնավորապես մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի մեջ պետք է դրական կապ լինի, որը կնշանակի, որ արտերկիրը զարգացած համայնքների բնակիչների համար ավելի <<հասանելի>> նպատակակետ կարող լինել, քանի որ միգրացիան ենթադրում է որոշակի ծախսեր, որոնց մեջ զգալի դեր ունի ֆինանսականը: Մյուս կողմից ենթադրվում է, որ կարևոր նշանակություն ունի նախկին միգրացիան: Այն մի կողմից պայմանավորում է ներկայիս միգրացիան, քանի որ մարդիկ ավելի հակված են միգրացիայի դիմելու այն վայրեր, որտեղ արդեն ծանոթ միգրանտներ ունեն, իսկ մյուս կողմից այն համայնքները, որտեղից նախկինում ավելի շատ միգրացիա է եղել, այլ հավասար պայմաններում հակված են ավելի բարձր զարգացածության մակարդակ ունենալ, քանի որ միգրանտներն արտերկրից

պարբերաբար գումարներ են ուղարկում տուն (տրանսֆերտներ), ներդրումներ են կատարում իրենց համայնքում և այլն:

- Մոդելների գնահատման ժամանակ բացահայտվել է, որ, իրոք, տարածական մոդելներն ավելի լավ արդյունք են ցուցաբերում AIC (Akaike information criterion) և R^2 ցուցանիշների տեսանկյունից, ընդ որում, SAR մոդելը ավելի ցածր AIC և ավելի բարձր R^2 է ունեցել, քան SEM մոդելը:
- Համայնքներից արտագաղթի վրա ազդող գործոնների ավելի մանրամասն վերլուծության նպատակով իրականացվել է նաև աշխարհագրորեն կշռված ռեգրեսիա (ԱԿՌ): Ամեն մի համայնքի համար ռեգրեսիա գնահատելիս ընտրանքը կազմվել է այդ համայնքին հարևան 150 համայնքից՝ օգտագործելով թագուհու հարևանության չափանիշը: ԱԿՌ-ն գնահատելիս սովորաբար հետազոտողին հետաքրքրում է ոչ թե գործակիցների նշանակալիությունը, այլ դրանց արժեքները տարբեր տարածական միավորներում, մեր դեպքում՝ համայնքներում: Պարզվել է, որ երկրի որոշ հատվածներում ՏՋՀ-ի ազդեցությունը միգրացիայի ցուցանիշի վրա դրական է, իսկ որոշ հատվածներում՝ բացասական:

Ատենախոսության **<<Եզրակացություններ>>** բաժնում ամփոփվել են հետազոտության արդյունքում ստացված հիմնական եզրահանգումները, որոնք ներկայացված են ստորև՝

- Միգրացիայի վրա սահմանադրականության ազդեցությունը հիմնականում արտահայտվում է հետևյալ պատճառահետևանքային կապի միջոցով. երկրում սահմանադրության դրույթների խախտումները և դրանց ոչ լիարժեք իրացումը կյանքում, այլ կերպ ասած՝ սահմանադրականության մակարդակի պակասուրդը, հանգեցնում են սոցիալ-տնտեսական լուրջ հիմնախնդիրների, որոնք կարող են ուղղակի կամ միջնորդավորված ազդեցություն ունենալ միգրացիայի որոշիչների վրա՝ պատճառ դառնալով մարդկանց տեղաշարժի երկրից դուրս:
- Միգրացիայի վրա սահմանադրականության ազդեցության մոդելավորումը կարելի է իրականացնել երկու մակարդակով՝ միկրո և մակրո:
- Երկրի իշխանության նկատմամբ ունեցած վստահությունն ազդում է մարդկանց միգրացիոն հակումների վրա: Այն մարդիկ, ովքեր ավելի քիչ են վստահում երկրի իշխանություններին, ավելի են հակված երկրից մշտական միգրացիայի դիմելու: Երկրի իշխանությունների նկատմամբ վստահություն փոփոխականը ստացվել է գործոնային վերլուծության արդյունքում. այն հիմնված է իշխանության երեք թևերի, քաղաքական կուսակցությունների, մամուլի, ոստիկանության և տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ վստահության վերաբերյալ փոփոխականների վրա: Մարդկանց տնտեսական վիճակի և արտագաղթելու միջև կապը նշանակալի է և հակադարձ բնույթ ունի: Նախորդ տարիների համար կատարված վերլուծությունները ցույց են տալիս, որ վերոնշյալ միտումները դրսևորվում են գրեթե բոլոր տարիների՝ 2008-2015 թվականների ընթացքում:
- Համայնքից արտերկիր միգրացիայի և ՏՋՀ-ի միջև առկա է դրական կապ, իսկ համայնքից Երևան միգրացիայի և ՏՋՀ-ի միջև առկա է բացասական կապ: Սա

նշանակում է, որ ինչքան համայնքը զարգացած է, այնքան մարդիկ ավելի շատ են մշտական բնակության նպատակով այնտեղից մեկնում արտերկիր: Ինչ վերաբերում է համայնքներից դեպի Երևան միգրացիայի դեպքին, ապա նկատվում է հակառակ երևույթը, այն է՝ ինչքան համայնքը թույլ է զարգացած, այնքան մարդիկ ավելի շատ են մշտական բնակության նպատակով այնտեղից մեկնում Երևան: Ավելի մանրամասն վերլուծությունն աշխարագրորեն կշռված ռեգրեսիայի միջոցով ցույց է տալիս, որ դեպի արտերկիր միգրացիայի և տարածքային զարգացման մակարդակի միջև կապը հաստատուն չէ ամբողջ երկրի մասշտաբով, որոշ հատվածներում այն դրական է, որոշ հատվածներում՝ բացասական, մի մասում էլ այն գրեթե բացակայում է:

Ատենախոսության հիմնական դրույթները հրապարակվել են հեղինակի հինգ գիտական հոդվածներում և երկու գիտաժողովների նյութերի ժողովածուներում՝

1. Չախոյան Գ., 2017: ՀՀ բնակչության արտագաղթի որոշիչները: *Հայաստանի ճարտարագիտական ակադեմիայի լրաբեր (ՀՃԱԼ)*, Հ. 14, N. 1, էջ 36-40:
2. Չախոյան Գ., 2017: ՀՀ բնակչության արտագաղթի որոշիչների դինամիկայի վերլուծություն: *Ֆինանսներ և էկոնոմիկա*, #3-4 (199-200), էջ 33-35:
3. Chakhoyan G., Hakobyan Ye., 2017. Territorial Development Index: Case Study of the Republic of Armenia. *Proceedings of Engineering Academy of Armenia (PEAA)*, Vol.14, No. 3, pp. 355-361.
4. Չախոյան Գ., 2017: ՀՀ ներքին եվ արտաքին միգրացիայի միտումները: *«Բանբեր Երևանի համալսարանի. Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն»*, No. 3 (24), էջ 54-68:
5. Հակոբյան Ե., Չախոյան Գ., 2017: ՀՀ համայնքներում մակերևութային ջրերի որակի գնահատում: *Ֆինանսներ և էկոնոմիկա*, #9-10 (205-206), էջ 156-161:
6. Չախոյան Գ., 2017: ՀՀ բնակչության միգրացիայի դետերմինանտները և դրանց փոփոխության դինամիկան 2008-2015թթ.: *<<Տնտեսագիտության ժամանակակից հիմնահարցեր>> ուսանողների, ասպիրանտների և երիտասարդ գիտնականների միջազգային 5-րդ գիտաժողովի նյութերի ժողովածու*, Երևան: ԵՊՀ ԵԳՄ, 2017:
7. Chakhoyan G., 2017. On Armenian Migration Economic Circles. *Materials of the International Conference "Problems of energy and energy savings"*, Yerevan, 2017.

Чахоян Гагик Робертович

Моделирование миграционных процессов в контексте конституционализма (на примере Республики Армения)

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности: 08.00.08 – «Математическая экономика»

Защита диссертации состоится 25-го мая 2018 г. в 13:30 часов на заседании Специализированного совета по экономике 015 ВАК РА, действующего в Ереванском государственном университете.
Адрес: 0009, г. Ереван, ул. Абовяна 52.

РЕЗЮМЕ

Основная цель диссертации заключается в построении и оценке моделей влияния конституционализма на миграцию в Армении.

Для достижения указанной цели сформулированы и определены следующие задачи:

- изучить литературу о конституционной экономике и конституционализме, уделяя при этом особое внимание на работы последних лет армянских авторов относительно оценки уровня конституционализма;
- изучить опыт армянских и иностранных авторов теоретического и эмпирического анализа детерминантов миграции;
- построить причинно-следственные связи влияния конституционализма на миграцию;
- изучить динамику миграционных потоков РА после декларирования независимости;
- оценить микроэкономическую модель влияния конституционализма на миграцию, при этом в центре исследования удерживая те факторы, которые выражают отношение людей к действующим в стране институтам;
- изучить международный опыт построения индексов и вырабатывать индекс территориального развития РА на уровне общин;
- применить метод пространственной интерполяции – кригинг для оценки качества воды в общинах, которая является элементов экологического компонента индекса территориального развития;
- продемонстрировать диспропорциональность территориального развития РА с помощью карты;
- оценить модели детерминантов эмиграции из общин РА, применяя модели регрессии с пространственным лагом и с пространственной ошибкой;

- выявить зависимость между миграцией и уровнем территориального развития в разных областях страны, применяя метод географически взвешенной регрессии.

Объектом исследования диссертации является конституционализм и миграционные процессы в Армении, а предметом - разрабатывание и эмпирическая оценка моделей влияния конституционализма на миграцию.

В первой главе диссертации <<**Теоретико-методические основы влияния конституционализма на миграцию**>> представлена литература о конституционной экономике и конституционализме, в частности, работы армянских авторов, направленные на оценку уровня конситуционализма. Также представлены характер, основные определения, виды и теории миграции. В завершающей части главы представлена теоретическая рамка влияния конституционализма на миграцию.

Во второй главе <<**Экономико-математические модели влияния конституционализма на миграцию**>> подробно изучен международный опыт моделирования миграции, в частности, теоретические модели выявления детерминантов миграции, типы данных и статистический и эконометрический аппарат, применяемые для оценки этих моделей. Также изучены основные эмпирические работы армянских и иностранных авторов по выявлению детерминантов миграции.

В третьей главе <<**Оценка влияния конституционализма на миграцию РА**>> представлены микро - и макроэкономические модели влияния конституционализма на миграцию и их оценка.

Основная научная новизна работы заключается в следующем:

- Разработана микроэкономическая модель влияния конституционализма на миграцию. В модель выявления детерминантов миграции включен новый компонент, который выражает отношение людей к разным институтам. Выявлена связь между доверием людей к институтам и их склонности к миграции, которая сохраняется в течение последних лет.
- Построена и оценена макроэкономическая модель детерминантов внутренней и внешней миграции РА для оценки которого были использованы методы пространственной регрессии. Выявлено, что между уровнем развития общины и миграцией за рубежом есть позитивная зависимость, а между уровнем развития общины и миграцией в Ереван- отрицательная зависимость.
- Разработана методология для построения индекса территориального развития РА, которая является обобщенной, общей количественной оценкой, выражающей уровень развития общины. В индекс включен экологический компонент, а новый метод был предложен для оценки одного из элементов этого компонента - качеством воды в общине.

Gagik Robert Chakhoyan

Modelling of Migration Processes in The Context of Constitutionalism (case of The Republic of Armenia)

The abstract of the Dissertation for pursuing the degree of PhD in Economics in the field 08.00.08 – "Mathematical Economics"

The defense of the Dissertation will take place on May 25th, 2018 at 13:30 at the meeting of the Specialized Council 015 in Economics of the Supreme Certifying Commission of the Republic of Armenia acting at the Yerevan State University.

Address: 52 Abovyan St., Yerevan, 0009.

SUMMARY

The main purpose of the dissertation is the building and the estimation of the models of the impact of constitutionalism on migration.

To reach this objective the following problems have been posed:

- study the literature about constitutional economics and constitutionalism paying special attention to the recent papers of the Armenian authors devoted to evaluation of the level of constitutionalism,
- study the Armenian and foreign practice of the theoretical and empirical analysis of the determinants of migration, the main models and the most frequently used statistical and econometric methods for the estimation of those models,
- build the cause-and-effect relationships of the impact of constitutionalism on migration,
- study the dynamics of the migration flows of RA after the independence,
- estimate the microeconomic model of the impact of constitutionalism on migration focusing on the factors which express people's attitude towards the institutions,
- study the international practice of building indices and develop a territorial development index for Armenian communities,
- use the spatial interpolation method kriging for the evaluation of water quality in the communities of RA, which is an element of the ecological components of the territorial development index,
- demonstrate the disproportionalities in the level of development of Armenian communities using the map,

- estimate the determinants of the emigration from the communities of RA applying spatial lag and spatial error regression models,
- discover the relation between the migration and the level of territorial development in various parts of the country applying geographically weighted regression method.

The object of the research is the constitutionalism and the migration processes in Armenia. The subject of the research is the development and empirical estimation of the impact of constitutionalism on migration.

In the first chapter of the dissertation "**The theoretical-methodological basis of the impact of constitutionalism on migration**" the literature about constitutional economics and constitutionalism was reviewed, particularly the recent papers of Armenian authors on the evaluation of the level of constitutionalism. The nature, definitions, types and theories of migration were discussed as well. The theoretical framework of the impact of constitutionalism on migration was also presented.

In the second chapter of the dissertation "**The economic-mathematical models of the impact of constitutionalism on migration**" the international practice of modelling migration was studied in detail, particularly the types of data, the main models and the statistical and econometric methods of estimating of those models were studied. The main empirical papers on discovering the determinants of migration by Armenian and foreign authors were discussed as well.

In the third chapter of the dissertation "**The estimation of the impact of constitutionalism on migration in RA**" the microeconomic and macroeconomic models of the impact of constitutionalism on migration and their estimation results were presented.

The main results of the dissertation and their scientific novelty are the following:

- The microeconomic model of the impact of constitutionalism on migration was developed. A new component was added to the model of the determinants of migration which expresses people's attitude towards the various institutes. The nature of the relation between the attitude towards the institutes and the migration propensities was discovered which is stable over the last years.
- The macroeconomic model of the determinants of emigration from the communities of RA was developed and estimated for which spatial regression models were applied. It was discovered that there is a positive relation between the level of development and migration abroad and a negative relation between the level of development and migration to Yerevan.
- The methodology of building a territorial development index for RA was developed which is a composite quantitative measure of the level of development of the communities of RA. An ecological pillar was included in the index and a new method was proposed to evaluate one of the components of the pillar: the quality of the water in the communities.